ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մարտի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տաճատի Սարգսյանին:

Հայոց Հայրապետի և Մինիստրների խորհրդի մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին մասնակցում էին նաև Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը, ինչպես նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը: